ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի՝ 11.02.2025թ. կայացած նիստի թիվ 10 արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ

1. Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլիական բանասիրության և թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնների վարիչների պաշտոնների տեղակալման նպատակով մրցութային ընտրության անցկացում:

2. Ընթացիկ հարցեր:

Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի կազմի 36 անդամներից նիստին ներկա էին 33-ը:

Դեկան Գ. Բարսեղյանը, ողջունելով գործընկերներին, անգլիական բանասիրության և թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնների վարիչների պաշտոնների տեղակալման նպատակով մրցութային ընտրության անցկացման համար առաջարկեց ընտրել հաշվիչ հանձնաժողովի կազմ: Նախագահ ընտրվեց Աննա Խաչատրյանը, անդամներ՝ Մանանա Դալալյանը և Կարինե Քամալյանը:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. **Աննա Տարիելի Կնյազյանի**՝ նույն ամբիոնի վարիչի պաշտոնում ընտրվելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Աննա Կնյազյանը, հանգամանորեն ներկայացնելով անգլիական բանասիրության ամբիոնի ղեկավարման հայեցակարգը, նշեց նաև, որ ամբիոնի գիտակրթական գործունեությունն իրապես արդյունավետ է եղել ամբիոնի գործող վարիչ, պրոֆեսոր, բ.գ.դ. Սեդա Քերոբի Գասպարյանի բազմահմուտ ղեկավարման շրջանակում:
Ա. Կնյազյանը նշեց, որ իր գործունեության առանցքում կլինի հետևյալ աշխատանքների իրականացումը՝ կրթագիտական արդյունավետ գործունեության շարունակականության ապահովում, երիտասարդ կադրերի ներգրավում ուսումնական գործընթացում: Որակյալ և ուսանողակենտրոն կրթության համատեքստում կշարունակվեն կարևորվել ուսանողների կրթական կարիքներն ու պահանջները: Կշեշտադրվեն դասավանդման մեթոդաբանության արդիականացման ուղղությամբ կատարվող աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Փակ, գաղտնի քվեարկության կողմ՝ 33, դեմ՝ 0, անվավեր՝ 0 արդյունքների հիման վրա միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ հաստատելու եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը **Աննա Տարիելի Կնյազյանին** անգլիական բանասիրության ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ՝ Թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. **Ռուզան Ռաֆայելի Ղազարյանի**՝ նույն ամբիոնի վարիչի պաշտոնում վերընտրվելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Ռուզան Ղազարյանը ներկայացրեց ամբիոնի ղեկավարման ծրագիրը՝ մատնանշելով զարգացման հայեցակարգի հիմնական ուղղությունները: Ռ. Ղազարյանը նշեց, որ ամբիոնի գործունեությունն ընդգրկում է թարգմանության ակադեմիական ուսուցման համատեքստը, և այս շրջանակում կարևորում է դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված աշխատանքների շարունակականության, ինչպես նաև որակյալ մասնագիտական կրթության ապահովումը: Ամբիոնի կրթական ծրագրերը արդիականացվում են աշխատաշուկայի պահանջներին համապատասխան: Նշվեց, որ ամբիոնի գիտակրթական գործունեության համատեքստում մեծ նշանակություն ունի ուսանողակենտրոն կրթության իրականացումը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Փակ, գաղտնի քվեարկության կողմ՝ 29, դեմ՝ 4, անվավեր՝ 0 արդյունքների հիման վրա միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ հաստատելու եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշումը **Ռուզան Ռաֆայելի Ղազարյանին** թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչի պաշտոնը զբաղեցնելու վերաբերյալ:

Ընթացիկ հարցեր.

ԼՍԵՑԻՆ՝ Արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Մարիաննա Սամվելի Եփրեմյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և գիտական ղեկավարի հաստատման հարցը (Ժ. 01.07 Արտասահմանյան գրականություն մասնագիտություն): Նշվեց թեմայի արդիականությունն ու ակադեմիական շրջանակում նշյալ հետազոտության կարևորությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել արտասահմանյան գրականության ամբիոնի հայցորդ Մարիաննա Սամվելի Եփրեմյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Էդուարդո Մենդոսայի ստեղծագործության հիմնական միտումները» (Ժ.01.07. Արտասահմանյան գրականություն մասնագիտություն) և գիտական ղեկավար հաստատել բ.գ.թ., դոցենտ Նատալիյա Կարենի Գոնչար-Խանջյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԼՍԵՑԻՆ՝ Անգլիական բանասիրության ամբիոնի հայցորդ Նելլի Արմենի Այվազյանի թեկնածուական ատենախոսության թեմայի գիտական ղեկավարի հաստատման հարցը (Ժ. 02.07 Ռոմանագերմանական լեզուներ մասնագիտություն): Նշվեց, որ թեման իրապես արդիական է՝ նկատի առնելով ֆրանսերեն և անգլերեն քաղաքական խոսքի զուգադիր քննության հանգամանքը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաստատել Ն. Այվազյանի՝ «Քաղաքական դիսկուրսը փաստերի և հույզերի փոխհատման տիրույթում (ֆրանսերեն և անգլերեն քաղաքական խոսքի զուգադիր քննության հիման վրա)» թեկնածուական ատենախոսության թեման (Ժ. 02.07 Ռոմանա-գերմանական լեզուներ մասնագիտություն) և գիտական ղեկավար նշանակել բ.գ.դ., պրոֆեսոր Ս. Ք. Գասպարյանին: Որոշումն ընդունվեց միաձայն:

ԵԼՀ ֆակուլտետի դեկան և
գիտխորհրդի նախագահ,
բ.գ.թ., դոցենտ՝ Գ. Ռ. Բարսեղյան

Գիտխորհրդի քարտուղար, բ.գ.թ., դոցենտ՝ Մ. Գ. Դալալյան

11.02.2025 թ.